սաղէմ, 'ի Յոպպէ եւ 'ի Դամասկոս, եւ տակաւին պէտ ունիմք բաղում տեղեաց չինութեան եւ նորոգութեան։ Այլ նոքա ետուն պատասխանի՝ ոչ բաւական թուի մեզ այնքան դրամոց մնալ անգործ յԵրուսաղէմ, հայեցեալ 'ի փոփոխմունս և 'ի պատահմունս աշխարհի, գուցէ մատնեսցի 'ի ձեռս անխոհեմաց ոմանց, որպէս երբեմն վասն փակման Բեթզեհէմի դրան վատնեցիք աւելի քան 200 քսակս դրամոց՝ զոր վերստին բացին։ Ուստի մշտնջենաւոր մնալոյ այնց դրամոց կամիմք առնել տնօրէնութիւն ինչ եւ շահեցուցանել։ Եւ զկնի այսր խորհրդոյ գրեցին գիր առ Պօղոս Եպիսկոպոս յԵրուսաղէմ, և զի մի անկցի այս խորհուրդ 'ի բերանս այլոց՝ զայն գիր ետուն գրել Կիրակոս Եպիսկոպոսի, որ ունէր օրինակ զայս։

«Ի բազմապատիկ փորձոյ ակն յայտնի տեսաւ և տեսանի՝ զի խոհական տնտեսութիւն կառավարչաց ծնող է օգտի հասարակութեան և աղբիւր յորդառատ բարեաց, որով ոչ միայն զաւուրս իւրեանց կառավարութեան բարերջանիկս հանդերձեն, այլ և հոգաբարձու գտեալ ապագայից, անմահ յիշատակ կանգնեն յաշխարհի, և յետնոցն իսկ լինին առիթ և սատար բարօրութեան։ Այսպիսի խոհական տընտեսութեամբ գերազանց հանդիսացաւ սրբութիւն ձեր, զի սքանչելի իմն առաքինացեալ 'ի բազմատորձ կառավարութեան և հասուն կատարելութեամբ ծերացեալ 'ի նմին՝ քաջ գիտացեր զխանգարեալ կարգս Ս. Աթոռոյն բարեկարգել՝ զբազմադէզ պարտսն հատուցանել՝ չափաւորել զծախսն, և պաշտպանել զարդիւնս։ Արդարեւ տնտեսութիւն սքանչելի՝ ոչ յառատութեան զեղխս վարեցար՝ զի մի և 'ի ճշդութեան նկուն կացեալ մնասցէ Ս. Տունդ։

Որպէս ահա՛ դիտեալ մեր յառանձնութեան երեքին ստորագրեալքս զվեց ամեայ Ս. Աթոռոյդ արդեանց և ծախուց հաշիւն, զոր ընդ Կիրակոս Եպիսկոպոսի առաքեալ էիք, զովեցաք յոյժ զքոյոյ գովելի աշխատասիրութեան արդիւնս, արդարեւ զանազանութիւն մեծ եւ բաղում 'ի մէջ առաջնոցն և վերջնոցս։ Ուստի և պարտաւորիմք երախտագէտ մնօք չնորհակալու լինել զխոհեմազարդ տնտեսութենէդ, և մաղթել յամենաբարի Արարչէն զանգին կենացդ երկարութիւն և զհատուցումն բազմապատիկ 'ի հան-